

1234



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝

Շրջակա միջավայրի նախարար  
Հակոբ Սիմիոյան

« 06 » 02 2025թ.

## ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ N 027 - 25

Նախաձեռնող՝

« ԽՈՐ ՍԹՈՈՒՆ » ՍՊԸ

Արարաթի մարզ, Շահումյան բնակավայր, Պարոյր Սևակ փ, գ.15

Գործունեությունը՝

Արարաթի տրավերտինների և կավերի հանքավայրից  
օգտակար հանածոյի արդյունահանում

Արարաթի մարզ, Ավշար բնակավայր

Առդիր՝ 6 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ  
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 027 - 25

«06» *փետրվար* 2025թ.

Արարատի տրավերտինների և կավերի հանքավայրից օգտակար հանածոյի արդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Նախաձեռնող՝	«ԽՈՐ ՍԹՈՈՒՆ» ՍՊԸ
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն
Գործունեության տեսակը՝	«Ա» կատեգորիա
Գտնվելու վայրը՝	Արարատի մարզ, Արարատ համայնք, Ավշար բնակավայր

**Ներածական մաս.** Փորձաքննության ներկայացված հաշվետվությամբ նախատեսվող գործունեությունն իրականացվելու է Արարատի մարզի Արարատ համայնքի Ավշար բնակավայրի վարչական տարածքում:

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 3-րդ մասի, 2-րդ կետի «թ» ենթակետի՝ նախատեսվող գործունեությունը հանդիսանում է «Ա» կատեգորիայի գործունեության տեսակ:

Նախատեսվող գործունեության իրականացման համար հիմք են հանդիսացել՝ հանքավայրի հաստատված պաշարները՝ ԽՍՀՄ ՊՊՀ-ի 26.05.1976թ. N 7631 արձանագրությամբ, Ընկերության կողմից սահմանված արդյունահանման տեխնիկական առաջադրանքը և հողամասի վարձակալության վկայականը՝

N 12022024-03-0035, համաձայն որի հողամասի նպատակային նշանակությունը գյուղատնտեսական է, իսկ գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ արոտավայրերի:

**Նկարագրական մաս.** Արարատի տրավերտինների և կավերի հանքավայրի հայցվող տարածքը գտնվում է Ավշար բնակավայրի վարչական տարածքում: Արարատի տրավերտինների և կավերի հանքավայրը շահագործվում է դեռևս 1960-70-ական թվականից բազմաթիվ ընկերությունների կողմից՝ այստեղ ձևավորելով խիստ խախտված տեխնածին ռելիեֆ: Առկա են բազմաթիվ բացահանքեր





արտադրական հրապարակներ, լցակույտեր, այդ թվում՝ բազմաթիվ տիրազուրկ, չկառավարվող հանքեր և ենթակառուցվածքներ:

Ընկերությունը, ելնելով հանքավայրի տեղադիրքից, հանքամարմնի տեղադրման պարամետրերից և մակաբացման ապարների ոչ մեծ ծավալներից, տեղամասի մշակումը նախատեսում է իրականացնել բաց լեռնային մեխանիկական եղանակով՝ էքսկավատորի հենքի վրա տեղադրված հիդրավլիկ մուրճով:

Հանքավայրից հայցվող տարածքի մշակման համար ընտրվել է ընդերկայնական, միակողմանի խորացմամբ մշակման համակարգը, մակաբացման ապարները արտաքին ժամանակավոր լցակույտ տեղափոխումով:

Լեռնային աշխատանքների զարգացումը բացահանքում նախատեսվում է կատարել բացահանքի մշակման ժամանակացուցային պլանին համապատասխան, որի համաձայն բացահանքի հանքաստիճանները մշակվում են 5մ բարձրությամբ հանքաստիճաններով, հաջորդաբար, վերևից-ներքև: Բացահանքի տարեկան արտադրողականությունն է ըստ արդյունահանման՝ 33000մ<sup>3</sup>:

Բացահանքը վերջնական դիրքում կունենա հետևյալ պարամետրերը՝

ամենամեծ երկարությունը – 350մ

ամենամեծ լայնությունը – 100մ

բացահանքի առավելագույն խորությունը – 33.0մ

մակաբացման ապարների միջին հզորությունը – 0,15մ,

օգտակար հանածոյի միջին հզորությունը – 17,5մ

օգտակար հանածոյի հաշվեկշռային պաշարները՝ - 732480մ<sup>3</sup>

արդյունահանվող -կորզվող պաշարների քանակը՝ - 644720մ<sup>3</sup>

մակաբացման ապարների քանակը – 4800մ<sup>3</sup>, այդ թվում հիմնատակող ապարների քանակը – 8500մ<sup>3</sup>

բացահանքի օտարման մակերեսը – 3.2հա է. արդյունահանման ժամկետը կազմելու է 20 տարի:

Հայցվող պաշարների ծայրակետային կոորդինատներն են՝ ARM WGS – 84 (ARMREF 02) համակարգով՝

1. Y=8475973.2662 X=4416243.6524

2. Y=8476068.2531 X=4416181.5404

3. Y=8476075.4240 X=4416177.7798

4. Y=8476069.1375 X=4415888.7360

5. Y=8475971.6481 X=4415891.2906

Աշխարհագրական կոորդինատներն են՝

39 ° 52' 39" - հյուսիսային լայնության

44 ° 43' 11" - արևելյան երկայնության:

Օգտակար հանածոյի անջատումը զանգվածից բաղկացած է լինելու հետևյալ գործողություններից՝ սկզբում հանքաստիճանի վերևից, Volvo EC460BLC էքսկավատորի վրա սարքավորված հիդրավլիկական մուրճի հորատումով (առանց ջրի օգտագործման տեխնոլոգիայով) կատարվելու է օգտակար





հանածոյի զանգվածի փխրեցում բնական ճեղքերի, այնուհետ՝ արդյունահանման աշխատանքները բաղկացած են լինելու հետևյալ գործողություններից՝

- օգտակար հանածոյի անջատում զանգվածից,
- օգտակար հանածոյի հեռացում հանքախորշից,
- օգտակար հանածոյի բարձումը տրանսպորտային միջոցների մեջ և հանածոյի իրացումը սպառողի տրանսպորտային միջոցներով:

Բացահանքում լցակույտ առաջացնող ապարները 13300մ<sup>3</sup> ծավալով ներկայացված են որպես մակաբացման ապարներ՝ 4800մ<sup>3</sup> և հիմնատակող ապարներ 8500մ<sup>3</sup>:

Մակաբացման ապարները մինչև 1005մ նիշ ունեցող հորիզոնի շահագործումը տեղափոխվելու են բացահանքի հարավ-արևելյան հատվածում ձևավորվող արտաքին ժամանակավոր լցակույտ:

1005մ նիշ ունեցող հորիզոնի շահագործմանը զուգընթաց մակաբացման ապարները տեղափոխվելու են ներքին լցակույտ և տեղադրվելու են նույն հորիզոնի շահագործման ընթացքում արդյունահանվող հիմնատակող ապարների վրա, ապա հարթեցվելու են ձևավորելով ներքին լցակույտ:

Արտաքին ժամանակավոր լցակույտի մակերեսը կազմում է 0.25հա, շեպի թեքությունը 33-35°, միջին բարձրությունը 2մ:

Ներքին լցակույտի մակերեսը՝ կազմելու է 2,52հա, միջին բարձրությունը 0.41մ, որից մակաբացման ապարներինը – 0.147մ, հիմնատակող ապարներինը – 0,263մ:

Լցակույտառաջացումը կատարվելու է բուլդոզերային եղանակով:

Ապարները պահանջարկի դեպքում կարող են օգտագործվել ցեմենտի արտադրության համար: Մշակված տարածության ռեկուլտիվացված տարածքը կազմում է 3.27հա: Ռեկուլտիվացիայի են ենթարկվում նաև արդյունաբերական հրապարակը 0,03հա: Ընդհանուր մակերեսը կազմում է 3.3հա: Լեռնատեխնիկական ռեկուլտիվացիայից հետո իրականացվելու է կենսաբանական ռեկուլտիվացիա, որի համար նախատեսվում է 130000դրամ 1հա մակերեսի համար: Ամբողջ ռեկուլտիվացիայի արժեքը կկազմի 1407980դրամ:

Արդյունահանման տեխնոլոգիական գործընթացների հետ կապված նավթամթերքների մնացորդները (սպառողական հատկությունները կորցրած դիզելային յուղեր, բանեցված շարժիչների յուղեր, բանեցված դողածածկեր, կենցաղային աղբ) տեղադրվելու են արտադրական հրապարակում առանձին հատկացված տարածքում:

Նավթամթերքների պահեստավորման համար նախատեսված տարածքը բետոնապատված է, հարթակին տրված է թեքություն դեպի ավազով լցված որսիչներ, որտեղ արտահոսքի դեպքում կկուտակվեն նավթամթերքների մնացորդները:

Հողային ծածկույթ արդյունահանման տարածքում չկա, քանի որ տարածքը





երկար տարիներ ազդեցության ենթարկված է եղել:

Հայցվող տեղամասում խոշոր կենդանիների որջեր, բնադրավայրեր չեն հայտնաբերվել:

Ջրային ավազանի աղտոտում տեղի չի ունենալու, քանի որ հանքավայրի տարածքում գրունտային ջրերը բացակայում են, իսկ լեռնային աշխատանքների տեխնոլոգիայով արտահոսքեր չեն նախատեսվում:

Բացահանքի մատակարարումը տեխնիկական ջրով կատարվում է օգտակար հանածոյի արդյունահանման աշխատանքների ժամանակ փոշեդադարեցման, աշխատանքային հրապարակների, ճանապարհների և լցակույտերի ջրման նպատակով: Հանքավայրի հիդրոերկրաբանական պայմանների համաձայն, գետնաջրերը բացակայում են: Հետևաբար բացահանքում ջրհեռացնող կառուցվածքներ չեն նախատեսվում: Անմիջապես բացահանքի տարածքը թափվող անձրևային ջրերը հեռացվում են ինքնահոս կերպով և ներծծվում ճաքերի միջով:

Բացահանքից մթնոլորտ են արտանետվում փոշի և գազեր: Դրանց աղբյուրներն են հանդիսանում՝

- բացահանքը
- տրանսպորտ
- լցակույտեր

Օդային ավազան արտանետվող վնասակար նյութերն են՝

- անօրգանական փոշի (քարի հատումից, բուլդոզերային և տրանսպորտի աշխատանքներից, լցակույտերից)
- ազոտի և ածխածնի օքսիդներ և ածխաջրածիններ (դիզելային և բենզինային շարժիչներով աշխատող մեքենաներից):

Փոշու արտանետումների քանակը խիստ նվազեցնելու նպատակով նախատեսվում է հանվող և բարձվող ապարների թրջում չոր եղանակներին և լցակույտի ռեկուլտիվացիա: Այս միջոցառումները թույլ կտան փոշու արտանետումները կրճատել 80-90%-ով:

**Պարճառաքանական մաս.** Հաշվետվության փորձաքննության շրջանակներում կատարվել են գործունեությանն առնչվող գոյություն ունեցող բնապահպանական և սոցիալական ելակետային պայմանների ուսումնասիրություն, նախատեսվել է գործունեության իրականացման արդյունքում հնարավոր բնապահպանական և սոցիալական վնասակար ազդեցությունների կանխատեսումը և դրանց կանխարգելմանը, նվազեցմանը կամ բացառմանն ուղղված համապատասխան մեղմման միջոցառումներ, դրանց արդյունավետ իրականացման մեխանիզմներ: Շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները հիմնականում կապված են լինելու՝





- լեռնակապիտալ աշխատանքների, արդյունահանման աշխատանքների ընթացքում մարդու առողջության և աշխատանքի անվտանգության հետ,
- օդային ավազան անօրգանական փոշու արտանետման հետ,
- արտակարգ իրավիճակների առաջացման հետ,
- թափոնների առաջացման և կառավարման հետ:
- ռեկուլտիվացման աշխատանքների հետ:

Հայցվող տեղամասի մոտակա բնակեցված տարածքներն են՝ Արարատ, Վեդի քաղաքները, Ավշար, Գոռավան, Այգավան, Վանաշեն բնակավայրերը: Հանքավայրի տարածքից 0.5 կմ հեռավորության վրա է գտնվում նաև «Գոռավանի Ավազուտներ» պետական արգելավայրը:

Արգելավայրի վրա բացասական ներգործություն նախատեսվող գործունեությունը չի կարող ունենալ, քանի որ սանիտարապաշտպանիչ գոտու 100 մետր լայնությամբ շրջագծով սահմանված պահպանական գոտին չի փոխազդում հանքավայրի տարածքի հետ, իսկ մնացած բնակավայրերից հեռավորությունը բավարար է անբարենպաստ քամիների դեպքում անօրգանական փոշու ազդեցությունը շրջակա միջավայրի և մարդու առողջության վրա նորմայի սահմաններում պահելու համար:

**Եզրափակիչ մաս.** Հանրային լուսմների ծանուցումն իրականացվել է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ Արարատ համայնքի Ավշար բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում: Հանրային լուսմների նպատակն է հաշվի առնել բոլոր շահագրգիռ կողմերի և ազդակիր հանրության կարծիքները, առաջարկությունները և դիտողությունները նախատեսվող գործունեության վերաբերյալ: Փորձաքննական գործընթացին ներգրավվել են առողջապահության, ներքին գործերի, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունները, կադաստրի կոմիտեն, Արարատի մարզպետարանը, Արարատ համայնքը, ինչպես նաև շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները: Ստացված դիտողությունները և առաջարկությունները հաշվի են առնվել հաշվետվության լրամշակված տարբերակում: Նախատեսվող գործունեության իրականացման արդյունքում, շրջակա միջավայրի վրա հնարավոր բնապահպանական և սոցիալական ազդեցությունների վերլուծության համաձայն, շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունները կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում, քանի որ նախատեսվող աշխատանքները իրականացվելու են առկա էկոհամակարգերից բավարար հեռավորությունների վրա:

### Պարտադիր կատարման ենթակա պահանջներ

- Իրականացնել մթնոլորտային օդի պահպանության արտադրական հսկողություն օդերևութաբանական անբարենպաստ պայմաններում արդյունահանման աշխատանքների և արտանետումների նվազեցման միջոցառումներով:





- Նախատեսվող աշխատանքների ընթացքում և ավարտից հետո՝ հանքի փակման փուլում ցանկապատել արդյունահանման տարածքը՝ կենդանատեսակների մուտքը արդյունահանման տեղամաս բացառելու նպատակով:

-Ապահովել մշտադիտարկումների իրականացումը՝ «Ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման նպատակով պլանավորվող մշտադիտարկումների իրականացման պահանջների, ինչպես նաև արդյունքների վերաբերյալ հաշվետվությունները ներկայացնելու կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության 22.02.2018թ.-ի N 191-Ն որոշման համաձայն:

- Համաձայն ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի N 438 որոշման 43-րդ կետի՝ «Հիմնարկները, իրավաբանական և ֆիզիկական անձինք աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից պարտավոր են դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ հայտնել լիազորված մարմնին»:

### ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«ԽՈՐ ՍԹՈՈՒՆ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Արարատի տրավերտինների և կավերի հանքավայրից օգտակար հանածոյի արդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությանը տրվում է դրական փորձաքննական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝

Իսաչիկ Մարտիրոսյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ՝

Հերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ՝

Շուշանիկ Կարապետյան